

## ՄԱՍ 6. ԿԱԴՐԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Ծառայության աշխատակիցների մասնագիտական որակական կազմը բնութագրվել է տնտեսագետների (46.9%), ինչպես նաև բարձրագույն կրթությամբ (91.8%) կադրերի գերակշռությամբ: Ծառայության աշխատակիցների 76.8%-ը կազմել են կանայք, 23.2%-ը՝ տղամարդիկ:

Ծառայության հաստիքների թվաքանակն ըստ տարիների բնութագրվել է հետևյալ համամասնություններով (հունվարի 1-ի դրությամբ).

	2013թ.	2014թ.	2015թ.
Կենտրոնական ապարատ	181	181	181
Առանձնացված ստորաբաժանումներ	179	179	179
<b>Ընդամենը /Ծառայություն/</b>	<b>360</b>	<b>360</b>	<b>360</b>

Հաշվետու ժամանակահատվածում Ծառայությունում աշխատանքի է ընդունվել 157 մարդ, այդ թվում՝ 2013 թվականին՝ 75, 2014 թվականին՝ 47, 2015 թվականին՝ 35, որից քաղաքացիական ծառայող՝ 119, այդ թվում 2013 թվականին՝ 58, 2014 թվականին՝ 37, 2015 թվականին՝ 24:

Ծառայությունից աշխատանքից ազատվել է 160 մարդ, այդ թվում 2013 թվականին՝ 77, 2014 թվականին՝ 51, 2015 թվականին՝ 32, որից քաղաքացիական ծառայող՝ 115, այդ թվում՝ 2013 թվականին՝ 59, 2014 թվականին՝ 35, 2015 թվականին՝ 21:

Ծառայության աշխատակազմում վերապատրաստվել և ատեստավորվել են հետևյալ թվաքանակով քաղաքացիական ծառայողներ.

Քաղաքացիական ծառայության պաշտոնների խմբերը	2013թ.		2014թ.		2015թ.		Ատեստավորման արդյունքում չեն համապատասխանել զբաղեցրած պաշտոնին
	վերապատրաստում	ատեստացիա	վերապատրաստում	ատեստացիա	վերապատրաստում	ատեստացիա	
բարձրագույն	-	-	2	-	1	2	-
գլխավոր	19	20	23	15	26	26	-
առաջատար և կրտսեր	81	77	66	52	76	72	-
<b>Ընդամենը՝</b>	<b>100</b>	<b>97</b>	<b>91</b>	<b>67</b>	<b>103</b>	<b>100</b>	<b>-</b>

Ծառայության աշխատակազմի քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնները համալրելու համար անց է կացվել 38 մրցույթ, այդ թվում՝ 2013 թվականին՝ 22, 2014 թվականին՝ 13, 2015 թվականին՝ 3:

Ծառայության նախագահ Ս. Մնացականյանը Հայաստանի Հանրապետության նախագահի 2015 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ ՆՀ-847-Ա հրամանագրով պարգևատրվել է «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 2-րդ աստիճանի մեդալով:

Ծառայության նախագահ Ս. Մնացականյանը և Խորհրդի անդամ Գ. Անանյանը ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպության կողմից 2015 թվականին պարգևատրվել են «ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպության առաքելությանն աջակցություն ցուցաբերելու համար» շքանշանով:

Հայաստանի Հանրապետության նախագահի 2014 թվականի սեպտեմբերի 22-ի թիվ ՆՀ-475-Ա հրամանագրով Ծառայության աշխատակազմի ղեկավար Ա. Հայրապետյանին շնորհվել է առաջին դասի պետական խորհրդականի դասային աստիճան:

«Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով Ծառայության նախագահի և աշխատակազմի ղեկավարի կողմից շնորհվել են դասային աստիճաններ՝ 2013 թվականին՝ 41 քաղաքացիական ծառայողի, 2014 թվականին՝ 47 քաղաքացիական ծառայողի, այդ թվում առավելագույն դասային աստիճան՝ 15 քաղաքացիական ծառայողի, 2015 թվականին՝ 17 քաղաքացիական ծառայողի:

Ի դեմս Ծառայության նախագահի և աշխատակազմի ղեկավարի՝ կնքվել են աշխատանքային պայմանագրեր և համաձայնագրեր Ծառայության աշխատակազմում, Գյուղատնտեսական համատարած հաշվառման վարչությունում, «Պետական վիճակագրական տեղեկատվության հավաքագրում» ծրագրում և քաղաքացիական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոններում նշանակված աշխատակիցների հետ:

Ուսումնական և արտադրական պրակտիկա է կազմակերպվել Երևանի պետական համալսարանի, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի, Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայի, Հայաստանի ազգային ագրարային համալսարանի, Հայ-ռուսական (Սլավոնական) պետական համալսարանի, Ռուսաստանի տուրիզմի և սերվիսի պետական համալսարանի Երևանի մասնաճյուղի, «ԷԼԷՆԱՐ» Ռուս-հայկական դիստանցիոն տեխնոլոգիաների կենտրոն ՍՊԸ-ի, Մոսկվայի տնտեսագիտության, վիճակագրության և ինֆորմատիկայի պետական համալսարանի, Գավառի պետական համալսարանի, Գյումրու պետական մանկավարժական համալսարանի, Եվրոպական տարածաշրջանային ակադեմիայի, Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի, Երևանի «Մովսես Խորենացի» համալսարանի, Երևանի «Գլաձոր» համալսարանի, Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջի թվով 615 ուսանողների համար:

Բարեխիղճ աշխատանքի համար Ծառայության նախագահի հրամանով 10 աշխատակից, իսկ աշխատակազմի ղեկավարի հրամանով 22 աշխատակից խրախուսվել են շնորհակալագրով: